ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ

ԱՆԻ

Ռ. ԵԿԵՂԵՑԻ, ՓՐԿԻՉ. — Երկրորդ եկեղեցին փրկիչ անուանակոչեալ՝ յարևելից կուսէ կայ մեծի կաթողիկէին։ Զսմանէ թէպէտ չիք յիշատակ առ մատենագիրս ժամանակին, սակայն յարձանագրաց նորա վկայի շինեալ յԱպլղարիպ մարզպանէ։ Ցարածութեամբն յոյժ փոքր է քան զմիւսն, բայց այլաձև ճարտարպետութեանն մասամբ մի 'ի հոյակապ եկեղեցեացն. ձև նորա բոլորշի և 'ի մեծահատոր քարանց, և կաթողիկէն դեռ անկործան։ Քարինք հիմանցն նախ կանգնեալ 'ի վեր 'ի գետնոյն ամենևին բոլորշի, յետ այնորիկ 'ի զանազան կողմանս բաժանին տափարակ երկայնաձև ստուար վիմք, և առ անկեամբ իւրաքանչիւր սիւնակս ձևացուցեալ նուրբս յեղերաց քարանցն այնոցիկ. և արձանագիրքն ամենայն 'ի վերայ կողմանցն այնոցիկ շուրջանակի։ Ներքին կողմն եկեղեցւոյս յութ կիսաբոլորակս բաժանեալ է, և առ անկեամբ իւրաքանչիւր սիւն միակտուր. և 'ի վերնախարսխաց սեանցն այնոցիկ և համօրէն կողմանցն տակաւ ամփոփեալ առ 'ի ներքս 'ի մանեկաձև բոլորակն՝ ապա ամբառնայ 'ի վեր գմբէթն երկայնաձև համանման այլոց եկեղեցեաց, երկոտասան երկայնաձև պատուհանք շուրջանակի։ Դեռ ևս նշմարին յորմունս նորա նկարէն պատկերք։ Երկու դրունք են նորա, և աւանդատունք երկու անձուկք և երկայնաձևք առ 'ի ներքս որմոցն՝ որչափ ինչ տարեալ է ստուարութիւն նոցին, զի չելանեն արտաքս քան զբոլորակութիւն եկեղեցւոյն։ Ի կէսն անդ բարձրութեան մոյ 'ի կիսաբոլորակացն՝ որ հանդէպ է հարաւայնոյ դրանն, որմ ածեալ ամպիոնաձև տեղի յօրինեալ է, քարակերտ ելանելիս ունելով 'ի կողմանէ ընդ մէջ որմոյն մինչև անդր, և անտի մինչև 'ի տանիս եկեղեցւոյն։ Ցրամագիծ եկեղեցւոյս է $13\frac{6}{10}$ մեդր, և կիսաբոլորակացն իւրաքանչիւր $2\frac{8}{10}$, բաց 'ի խորանատեղւոյն՝ որ փոքր մի մեծ է քան զայլսն։ Եւ արձանագիրքն այսոքիկ.

✠ 'Ի ՆՁԴ Թուականիս ես ապլղարիպ մարզպան եդի հրովարտակ 'ի սմպատա շահանշահի առ կայսրն յունաց Միխէլ 'ի կոստանդինուպոլիս եւ շատ ջանիւ եւ մեծածախ գանձիւ բերի մասն 'ի սրբոյ խաչէն եւ եկեալ կատարեցի զտաճարս զայս եւ զնշանն յուսոյ կանգնեցի 'ի պատակ հարսինս քի եւ եդի լուծ սպասաւորաց եկեղեցոյս զկիւրակէին աւրն գիշերապաշտաւն առնել մինչեւ 'ի գալուստն քի եւ քահանա որ մեռանի 'ի սուրբ փրկչիս ի՞ մի կալցեն յեկեղեցիքդ եւ եթէ

ոք 'ի քահանայից եկեղեցոյս եւ յիմ սպասուցս եւ կամ 'ի գրենոյս յափշտակէ կամ ծախելով կամ զինչ եւ իցէ պատ-
ճառանաւ եւ կամ զաղահուԹեան զհետ երԹա եւ զեկեղե-
ցոյս մուտքս խորէ եւ ՝ԵՐ փրկչիս 'ի պէտս ոչ անցուցանէ 'ի
յԺը հայրապետացն նզովեալ լիցի եւ որ զգրգոր երիցու որ-
դեաքս յեկեղեցպանուԹենէ հանէ կրկին անիծիցդ պարտա-
կան լիցի իսկ կատարիչ գրիս աւրհնեալ լիցի ։ զգէորգ
գրիչ յիշեսջիք 'ի տէր ։

✠ յամս ՝ԵՐԾատպատիւ եւ հոգեւոր ՝ԵՐն պետրոսի հայոց կա-
Թողիկոսի եւ 'ի ԹագաւորուԹեան սմպատա որդւոյ գագիկ
շահանշահի 'ի ՆՁԵ Թուականիս ես սպլզարիպ մարզպան
որդի գրիգորս իշխանի եւ Թոռն ապուղամրի եւ եղբայր վա-
հրրմա եւ վասակա շինեցի զ՝ԵՐ փրկիչս 'ի մայրաքաղաքս յա-
նի շատ ջանիւ եւ մեծամեծաց դանձիւ եւ գնեցի հալալ ըն-
ջից իմոց կուղպականի ։ ՚ի ։ եւ ձի ։ ։ ։ եւ այգի եւ հողեաք
եւ եռու 'ի ՝ԵՐ փրկիչս եւ ։ ։ ։ բեցի ոսկւով եւ արծաԹւով
եւ ակամբք պատուականաւք եւ եռու աւետարան եւ տաւ-
նական եւ նո ։ ։ ։ ին եւ նոր կտակարանաւք եւ կանգնեցի
մել առ ։ ։ ։ բկչիս արդ եԹէ ոք 'ի մեծաց կամ 'ի փոքունց ։ ։ ։
ասուցս եւ կամ յայլ իրացս որ եռու եւ յափշտ ։ ։ ։ խափան
լիցի յԺը հայրապետացն նզովեալ լիցի ։ ։ ։ ց իմոց յաշխար-
հէս եդի լուծ 'ի վերայ սպասաւորաց ե ։ ։ ։ զվարդեվառին
Ի՞ ունան անխափան կատարել մին ։ ։ ։ տն քի՞ ընդ նմին եւ
զ ։ ։ ։ դւս գագիկ սմպատա շահանշահի ։

'ի ՆՁԵ Թուականիս հայոց եւ 'ի մեծափառ Թագաւորու-
Թեանս հզաւր եւ տիեզերակալ սմբատա որդւս գագիկ հայ-
ոց եւ վրաց շահայնշահի կամ եղեւ ինձ ՝ԵՐն պետրոսի հայոց
կաԹողիկոսի տալ զայգին մշնկի (կամ աշնկի) որ 'ի մեր կոր-
դս արկած էր քՀասէր մարզպանին ապլզարիպա որդւս գրի-
գորս պալհաւունս վասն առաւել սիրոյն եւ երախտեացն զոր
ծառաեալ էր զ՝ԵՐ լուսաւորչի աԹոռս արդ տուաք որմով

եւ ծառովք պտղաբերովք եւ անպտղաւք եւ խոտագետնովք եւ ՝ի աւր ջուր ազատ ՝ի խալաէ եւ ՝ի գեղջէ յամենայն հասուց եւ գրեցաք մեծաւ հաստատութեամբ զկտակս զայս իսկ նա ընծաեաց յիւր շինեալ եկեղեցիս ՝ի ՝ի՝ բ փրկիչս բաժակի վասն փրկական խորհրդոյն յիշատակ հոգւոյ իւրոյ արդ եթէ ոք զապարանսդ զոր շինեալ է ապլղարիպա առ ՝ի՝ բ փրկչիս աւ կամ զոր ինչ տուեալ է ՝ի պէտս եկեղեցոյդ եւ որոշէ ոք եւ կամ յապարանսդ բնակի եւ զեկեղեցոյդ հոգսդ զոր ինչ պիտոյ լինի եւ երկեւղիւ ՝այ ոչ հոգա ՝ի սուրբ լուսաւորչէն եւ ՝ի նորին աթոռակալացն մինչեւ ցմեզ յամենեցուն նզովեալ լիցի իսկ կատարիչ գրոցս աւրհնեալ լիցի ։

✠ ՝ԻՆՂԹ ՝ի հայրապետութեան տեառն պետրոսի հայոց կաթողիկոսի եւ թագաւորութեանն սմբատա որդւոյ գագկա շահանշահի ես քրիստափոր ծառա ՝այ ապաւինեալ յողորմութիւնն ՝այ եւ ՝ի ՝ի՝ բ փրկիչս ետու զիմ գանձադին հայրենիքս է տուն ՝ի ՝ի՝ բ փրկիչս վասն մեղաց իմոց թողութեան եւ հոգւոյ փրկութեան եւ պարտին քահանայք ՝ի՝ բ փրկչիտ յամէն ամ ՝ի ջրոս եկեղեցիքս յեկեղեցին ՝ի աւր ժամ արնել անխափան մինչեւ ՝ի դալուստն քի արդ եթէ ոք յիմոց կամ աւտար ոք հակառակ հոգւոյ իմ յայտնեսցի եւ զարձագրեալդ անփոյթ առնէ եւ իմ տներոյս յապշտակէ դատապարտեալ եղիցի ՝ի քէ եւ մեղաց իմոց պարտական լիցի ՝ի դալստեանն քի եւ անէծս մշտնջենականս ժառանգեսցէ իսկ կատարիչ գրիս աւրհնեսցի ։

✠ ՆՂԹ ես շահիկս եւ իմ որդիս վարդս տուաք զմեր կորդոյ շինած տունս եւ զբակս ՝ի ՝ի՝ բ փրկիչս եւ ՝ի ՝ի՝ բ յոհաննէսն յիշատակի ։

յամս ՝ճծապատիւ եւ հոգեւոր ՝ան բարեղի հայոց կաթողիկոսի եւ յամիրապետութեանն բարիանուն սուլդանի որդի ամիր մահմուտի թոռն մանուչէի ։ յամ ։ ՈԻԲ ։ թու ։ արդ ես

տրդատ քահանա որդի սոսթինիս քահանայի թոռն գէորգա աւագ երէցս արձոյ եւ զուգակից իմ խուշուշ աղախին քի յուսալով յողորմութիւն ՝ի շինեցաք վերսին զմեր գանձագին հայրենիքս զ՝ոբ փրկիչս շատ աշխատութեամբ եւ նորոգեցաք յառաջին պայծառութիւնն ոչ ունելով զոք աւգնական այլ միայն զբաւականն յամենայնի որով կարողացաք եւ կատարեցաք այդ եւ ընծայաբեր եղաք ՝ի սա ՝ի սորին շընորհէ շնորհս զնորս հնոմն ՝ն ծագիծ պատգամաւ նա եւ լեզարդս սպասուց ՝ի քառեսին խորանն որք կանխեցին հանին ՝ի սեղան զարդարեւ ուխտեալ զհաճելին կամացն հաւր պատարագ շինեցաք սմա ժամատունս ամարանոց եւ ձմերանոց եւ ՝ի կեանս մեր պաշտեցաք ՝ի սմա զեկաւորս ՝ն ավաղս հայց արդ ես տրդատ երէց եւ լծակից իմ խուշուշ ՝ի մեր հայրենի ժառանգութենց ՝ի սպաս պիտոյց հայի եւ գինւոյ տուաք ջորս այգի յարուն զսաղար եւ զշլիկն եւ զկովրածն եւ բլար խաչկայն եւ ՝ի տուն եկեղեցւոյն դիմաց մեծ արտք եխենցն ՝ն կապնով մին ՝ի մեքէսն ՝ի ջրփողին բեխենցն այս է ՝ի պլպղի արդ ընդ այսր աշխատութեան եւ պարգեւի պարտին ժառանգորդքն զկնի մեր կատարել ամենայն ամ։ խ։ մի ՝ի սրբդատա ՝ի տիկին խուշուշին եւ։ բ։ սարգսկանն որդո սողոմոնի անխափան կատարել զյիշատակս մեր մինչեւ ցծագումն որդւոյն ՝ա եւ մի ոք իշխեսցէ շորթել յարդեանցս հաստատելոց ՝ի սուրբ փրկէս ապա թէ ոք զատուսցէ և որոշեսցէ զյիշատակս մեր եւ ինքն որոշեսցի ՝ի փառաց որդւոյն ՝ա յԺ՝ըլիցն նզովեալ եղիցի ՝ի մահ եւ ՝ի կեանք կատարիչք գրոյս աւրհնեալ եղիցին ամէն։

՝ի թուականս։ ՉԽ։ ես միխթար որդի շերասցի որդի զուսի միսալուքենց ՝ոբ նշանս եւ ՝ի ՝ոբ ամենափրկիչս եւ բերի զանգականիս եւ շինեցի զանկակատունս ՝ի հալալ արդենց իմոց որք զվարձանէք ՝ի ձայնից սորա ասացէք տ՝ր ՝ն ողորմեա միխթարա եւ ծնողաց իւրոց սպասաւոր սորա m մատուցէ պատարագ։ ՝ա։ ՝ոբ գրի։

ԹՎ. ՁՂԱ. Շնորհիւ եւ ողորմութեամբ բարերար եւ մարդասիրին Աստուծոյ ես աթոռակ վարհամ որդի իւանէի որդուն մեծին եւ հզաւրին զաքարիայի վերստին նորոգեցի զկումբէթն որ փրկչիս վասն երկար կենդանութեան իմոյ եւ յիշատակ մեզ եւ նախնեց մերոց ⊙ արդ ես վասիլս որդի գրիգորս առաքեցա պատրոնին հրամանաւն աթաբակ վարհամա եւ եկել կատարեցի մեծ ջանիւ եւ աշխատութեամբ զհրամանելս ինձ եւ սպասաւորք որ փրկչիս ընձա մատուցին մեզ զվարդավառին կիրակէն ի պատարագ.

ՀԱՆԴԷՍ

Հարցաքննութեան և Պարգևաբաշխութեան աշակերտաց Ռափ. Վարժարանի։

Կրօնք, ուսումն և արուեստ, տկար մարդկութեան երեք նեցուկները, մանաւանդ թէ ըսել մանկական սրտից առաջին և յարատև բաբախմունքներն են ամենայն յառաջադէմ ազգաց մէջ։ Մինչ կրօնք ծնողաց միջնորդութեամբ պահ առ պահ մատաղ միտքերն 'ի խորս ճշմարտութեան կը ջանան մխել, ո՞վ կրնայ ժխտել թէ անոր ձայնին միշտ անվրէպ ունկնդիր ըլլալու համար պէտք է մնաց ըմբռնողութիւնն ու սրտից զգացմունքն ալ պատրաստել ժիր և ինքնանուէր դաստիարակաց ձեռքով, փոխանակ Աբարչին սիրոյ՝ միսիթարութեան անփակ գիրկ մը բաց ցուցընելով ակներև անոնց հոգւոյն աչացը, և գոգցես աստուածեղէն լոյս մը սփռելով իրենց նորուսումն մտացը վրայ, զանազան գեղեցկութեամբ գիտութեանց զմայլեցնելով առ սուրբ և գերագոյն վախճան, և գործունեայ եռանդեամբ ըստ չափու կարողութեան՝ մարդկային արուեստի հրաշալիքներ հնարելու կամ կերտելու պատճառ ըլլալ իրենց։ Այս երեք կէտերն պատշաճապէս և անմոլար կերպով իրարու հետ կապակցելուն, և միմեանց օգնական ու դիւրացուցիչ ընելուն վրայ է միանգամայն կատարեալ դաստիարակութեան հրահանգը։ Աքանչելի պայման մը որ ունի կրթութիւնը. մարդկութեան անհաւասար տարերքը՝ զհոգի և ըզմարմին մէկմէկու մէջ հաշտ պահել և առ գերբնական օրէնս հնազանդեցնել. միով բանիւ կենաց անկանոն երգը բարեյարմար զուգել ըստ այլ և այլ աստիճանաց կրից, միշտ կանոն ուղղութեան՝ զԱստուած, և առաքինութեան՝ բարուց բարոյականը բռնելով, յորում է ճշմարիտ ճարտարութիւն մարդկութեան. և այն լծորդութիւնն ու միաբանութիւնն որ ունին ընդհանուր մասունք տիեզերաց իրենց շղթայակապ կարգաւորութեանը մէջ ըստ կարելոյն ծանօթացնելու ժամանակ, համագոյից կամ հոդագնտոյս մանրանկար՝ մեր մարդկութեան պզտիկ աշխարհքին հրաշալի շաղկապմանն և ստոյգ նպատակին հասու ընել զիրենք։

Այս խորհրդածութիւններս սովորականէն աւելի ազդեց մեր վրայ այս տարուոյս Ռափ. Վարժարանին պարգևաբաշխութեան հանդիսաւոր օրը։ Գորովանոք լեցուեցանք մենք ալ աշակերտաց անկեղծ սրտին ու կրթութեանը թարգման այլ և այլ ընթերցուածքներ լսած ժամանակնիս. խումբ մը եռանդուն պատանեաց տեսնելով առջևնիս, որոնք զմայլմամբ իրենց վիճակին բաղդը ճանչցած ըլլալնին երեսի և շրթանց շնորհապարա երախտագիտութեամբն արտայայտելէն վեր-